ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատաշուկայի վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 3.1. Աշխատավարձի և աշխատանքի գնի վիճակագրության ընթացիկ իրավիճակի գնահատում

Առաքելության փորձագետներ

Պարոն Սթին Բիլֆելդթ Փեդերսեն, Դանիայի վիճակագրություն
Տիկին Մարիա Բոյե, Դանիայի վիճակագրություն

2016թ. -հունվարի 19-22

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

STATISTICS DENMARK

Փորձագետների կոնտակտային տվյալներ

Սթին Բիլֆելդթ Փեդերսեն
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն
Դանիա
Հեռ.՝ +45 3917 3101
Էլ. հասցե՝sbp@dst.dk

Մարիա Բոյե
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն
Դանիա
Հեռ.՝+45 3917 3422
Էլ. հասցե՝mab@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 5
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 8
Հավելված 2. Առաքելության ծրագիրը 8
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 10

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԴՎ	Դանիայի վիճակագրություն
ՎԿՀ	Վաստակների կառուցվածքի հետազոտություն
ԱԳՀ	Աշխատանքի գնի հետազոտություն
ԱԳԻ	Աշխատանքի գնի ինդեքս
ՀՀ ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
ՖՆ տվյալների բազա	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տվյալների բազա

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա երրորդ բաղադրիչի առաջին առաքելությունն էր, որի գործողություններն իրականացվել են առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Գործողության նպատակներն էին՝

- Ընթացիկ իրավիճակի գնահատում
- Մեթոդների և տվյալների աղբյուրների գնահատում
- Եվրոպական և ԱՄԿ ստանդարտների ներկայացում
- Քննարկումներում շահառուների ներգրավում

Փորձագետներն իրենց անկեղծ երախտիքն են հայտնում բոլոր պաշտոնյաներին և անձանց՝ Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Դանիայի վիճակագրական ծառայության կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Վաստակի թեման Հայաստանում նույնպես վաղուց ի վեր հետաքրքրություն է ներկայացնում քաղաքական գործիչների և տնտեսագետների շրջանում: Այդ հետաքրքրությունն արտացոլվում է աշխատանքի գնի շատ համապարփակ վիճակագրական համակարգում:

Փորձագետներն ընդհանուր առմամբ ծանոթացան Հայաստանում աշխատաշուկայի վիճակագրությանը՝ մասնավորապես անդրադառնալով վաստակներին և աշխատանքի գնին: Փորձագետներին շատ բովանդակալից կերպով ներկայացվեց Հայաստանում վաստակների և աշխատանքի գնի վիճակագրության ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև համակարգի ուժեղ և թույլ կողմերը:

Փորձագետները ծանոթացան վաստակների և աշխատանքի գնի վերաբերյալ տվյալներ հավաքագրելու նպատակով ՀՀ ԱՎԾ կողմից օգտագործվող տարբեր հարցաթերթերին, ինչն էլ հիմք կհանդիսանա հետագա առաքելությունների ընթացքում ընդհանուր քննարկումների համար: Հարցաթերթերի վերաբերյալ ավելի խորքային քննարկում ծավալելու նպատակով կողմերը համաձայնեցին մինչ հաջորդ առաքելությունը փորձագետներին տրամադրել ռեսպոնդենտներին ներկայացված ուղեցույցների և հարցաթերթերի թարգմանված տարբերակները:

Փորձագետները ներկայացրեցին վաստակների և աշխատանքի գնի վիճակագրության վերաբերյալ ԱՄԿ գործող կանոնակարգերը, ԵՄ օրենսդրությունը, Եվրոստատի ջենթլմենական համաձայնագիրը վիճակագրության վերաբերյալ,

ինչպես նաև Դանիայի վիճակագրությունը աշխատանքի գնի և վաստակների գծով: Ըստ փորձագետների, ՀՀ ԱՎԾ-ն ցանկանում է ՀՀ ֆինանսների նախարարությանը պատկանող տվյալների բազայից օգտվելու թույլտվության ստանալ, սակայն այդ գործընթացը դեռևս բանակցային փուլում է:

Տվյալների բազան պարունակում է անվանական տեղեկություններ աշխատակիցների վերաբերյալ, որը ՀՀ ԱՎԾ-ն վաստակների և աշխատանքի գնի հետազոտությունների միջոցով չի ստանում: Եթե ՀՀ ԱՎԾ-ն ցանկանում է համապատասխանել վաստակների կառուցվածքի վերաբերյալ ԵՄ օրենսդրությանը, ապա անհրաժեշտ է աշխատակիցների անվանական տվյալների առկայությունը: Առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ-ն ծանոթանա տվյալների բազային: Յուրաքանչյուր անհատի վերաբերյալ բավարար տեղեկատվություն ստանալու տվյալների բազայի օգտակարությունը կարող է ելակետային դառնալ քննարկումների ծավալման համար: Փորձագետները կարծում են, որ աշխատողների վերաբերյալ անվանական տեղեկությունները հույժ կարևոր են: Այդուհանդերձ, առաջարկվում է յուրաքանչյուր առաքելության շրջանակում ժամանակ հատկացնել տվյալների բազայի հասանելիության գնահատմանը: Ըստ փորձագետների, այլընտրանքային տարբերակ կարող է ծառայել նոր հարցաթերթի ավելացումը ըստ նպատակահարմարության և անհրաժեշտության, որը պահանջում է հետագա քննարկում և ուսումնասիրություն: Առաքելություն 3.4-ի կեսը առաջարկվում է նվիրել վերոնշյալ կետին:

Փորձագետները նաև կիսեցին շահառուների հետ համագործակցելու իրենց փորձը՝ մասնավորապես անդրադառնալով երկամյա կտրվածքով կազմակերպվող հանդիպմանը, որի ընթացքում իրականացվում են քննարկումներ, տեղեկատվության և գաղափարների փոխանակում ամենատարբեր թեմաներով՝ մեթոդաբանությունից մինչև տարածում: Հաղորդակցումը լավ է ընթանում, իսկ արձագանքները Դանիայի վիճակագրության համար շատ կարևոր են: Այս կերպ շահառուները ներգրավվում են գործընթացում և ավելի պարտավորված ու հավատարիմ են դառնում: Շահառուների հետ քննարկվում է նաև որակի հարցը, որը նրանց համար նույնպես մտահոգիչ է, քանզի նրանք վիճակագրական տվյալներն օգտագործում են որպես գործիք իրենց առօրյա աշխատանքում: Դա նշանակում է, որ նրանք հետաքրքրված են իրենց ազդեցությունն օգտագործել խնդիրները լուծելու համար:

Փորձագետները կարծում են, որ շահառուների ներգրավումը այս ծրագրում կարևոր է: Այն կարող է բարելավել 3-րդ բաղադրիչից ակնկալվող արդյունքները: Այդուհանդերձ, խորհուրդ է տրվում առաքելությունների ընթացքում ներգրավել և իրազեկել շահառուներին:

Սույն առաքելության շրջանակում շահառուների ներգրավման նախադեպ էր վերջիններիս հետ հանդիպումը, որի ընթացքում նրանք տեղեկացան ծրագրի մասին և ծանոթացան Աշխատանքի վիճակագրության բաժնի աշխատանքին: Շահառուների հետ հանդիպումը կարելի է հաջողված համարել, քանի որ նրանք ակտիվ մասնակցում էին տարբեր թեմաների շուրջ քննարկումներին՝ մեթոդաբանությունից և ժամանակագրական շարքերի ընդհատումից մինչև ցուցանիշներ և տվյալների մատչելիություն: Աշխատանքի վիճակագրության բաժնի կողմից ցուցաբերած լսելու և հարցերի շուրջ բաց քննարկումներ ծավալելու պատրաստակամությունը

տպավորել էր փորձագետներին: Փորձագետները վստահ են, որ շահառուների ներգրավումը կարող է արժեք ստեղծել առաքելությունների ընթացքում:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Այնպիսի տպավորություն է, որ ՀՀ ԱՎԾ-ն շատ մտահոգված է սպառողների և ռեսպոնդենտների խնդիրներով և կարիքներով թե՛ ազգային, թե՛ տարածաշրջանային մակարդակով: Նման մտահոգությունը հաստատում է ընդհանուր տպավորությունն առ այն, որ ՀՀ ԱՎԾ-ն պրոֆեսիոնալ կառույց է և ունի վաստակների և աշխատանքի գնի ոլորտում բավական բարձրորակ վիճակագրական համակարգ: Ինչ վերաբերում է միջազգային չափանիշներին համապատասխանելու հարցին՝ ընդհանուր տպավորությունն այն է, որ ՀՀ ԱՎԾ համակարգն ակնհայտորեն կարող է համապատասխանել, եթե մի քանի փոփոխություններ և որոշ նախաձեռնություններ իրականացվեն: Նման փոփոխություններն ու նախաձեռնությունները կլինեն հաջորդ առաքելությունների ուշադրության կենտրոնում:

Հաջորդ առաքելությունը նվիրված կլինի Վաստակների կառուցվածքի հետազոտությանը, մասնավորապես՝

- Մանրամասն քննարկում առկա հարցաթերթերի ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև միջազգային չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ:
- Վաստակների և աշխատանքի գնի տարբերակումը միջազգային համատեքստում կարող է որոշ կետերով տարբերվել Հայաստանից:
- Ներկայումս անհատի մակարդակով վաստակների վերաբերյալ տեղեկություններ չեն հավաքագրվում:
- Փոքր և գերփոքր ընկերությունների համար ամսական կտրվածքով տվյալների հավաքագրումը պարտադիր չէ:
- ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազայից օգտվելու հնարավորությունը:

Առաքելության ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա փորձագետները գնահատեցին առաքելության պլանը և առաջարկեցին որոշակի փոփոխություններ կատարել: Առաքելությունների առաջարկվող ծրագիրը ներկայացված է ստորև:

Փոփոխություններ կատարելու կարևոր նախապայմաններից մեկը ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազայից օգտվելու կամ գոնե հասանելի փոփոխականների վերաբերյալ տեղեկություն ունենալու անհրաժեշտությունն է, որը կարող է ժամանակատար լինել: Այդուհանդերձ, ապրիլին նախատեսված առաքելության շրջանակում տվյալների բազայում առկա փոփոխականների ցանկի հասանելիությունը կարող է չափազանց լավատեսական թվալ:

Բացի այդ, որպեսզի փորձագետները լավագույնս ներկայանան աշխատանքի գնի ինդեքսին վերաբերող առաքելությանը, անհրաժեշտ էր այն միառժամանակ հետաձգել:

Առաջիկա 5 առաքելությունների համառոտ նկարագիրը՝

Առաքելություն 3.2 - Վաստակների կառուցվածքի հետազոտություն, ՎԿՀ հնարավոր աղբյուրների գնահատում, ներառյալ ՀՀ ՖՆ տվյալների բազան (2016թ.-ի մայիս):

Առաքելություն 3.3 - ուսուցողական այց Դանիա (2016թ.-ի սեպտեմբեր):

Առաքելություն 3.4 - Վաստակների կառուցվածքի հետազոտություն (աղբյուր և հաշվարկ), Աշխատանքի գնի ինդեքսի (ԱԳԻ) հաշվարկ ԵՄ կանոնակարգերի համաձայն, քանի որ ԱԳԻ ներկայումս չի հաշվարկվում Հայաստանում (2016թ.-ի նոյեմբեր):

Առաքելություն 3.5 - Վաստակների կառուցվածքի հետազոտություն (ՎԿՀ) և Աշխատանքի գնի ինդեքս (ԱԳԻ), մասնավորապես ԱԳԻ հաշվարկ և հրապարակման պլանի քննարկում (2017թ.-ի փետրվար):

Առաքելություն 3.6 - Տարբեր վիճակագրությունների առաջընթացի գնահատում, արտաքին շահառուների համար սեմինար՝ վաստակների վիճակագրության և միջազգային ուղեցույցների մասին իրազեկմամբ (2017թ.-ի ապրիլ): Սեմինարի նախագահողը կլինի ՀՀ ԱՎԾ-ն:

Առաքելություն 3.2-ի համար սահմանվել են հետևյալ վերջնաժամկետները, որոնք պետք է կատարվեն նախքան առաքելությունների մեկնարկը:

Առաքելություն 3.2: Վաստակների կառուցվածքի հետազոտություն (ՎԿՀ) - Մայիս

Գործողություն	Վերջնաժամկետ	Պատասխանատու անձ
Թարգմանել հարցաթերթերի ուղեցույցները	2016թ. մայիսի 15	ՀՀ ԱՎԾ
Պարզել ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազայում հասանելի փոփոխականների ցանկը և թարգմանել այն	2016թ. մայիսի 15	ՀՀ ԱՎԾ
Ակտիվորեն փորձել մուտքի իրավունք ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազա	2016թ. մայիսի 15	ՀՀ ԱՎԾ
Հանգամանորեն ներկայացնել տվյալների հավաքագրման, հաշվարկման և հրապարակման ընթացիկ իրավիճակը	2016թ. մայիսի 15	ՀՀ ԱՎԾ

Դիտարկել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սեփական տվյալների բազան փորձագետներին և աշխատանքի գնի ոլորտում ՀՀ ԱՎԾ աշխատակիցներին ներկայացնելու հնարավորությունը՝ շեշտը դնելով տվյալների հավաքագրման եղանակների, բովանդակության և որակի վրա:	2016թ. մայիսի 15	ՀՀ ԱՎԾ
Ներկայացնել առկա ԵՄ օրենսդրությունը	2016թ. մայիսի 15	Դանիայի վիճակագրություն
Համեմատել ՀՀ ԱՎԾ-ի ներկայիս կառուցվածքը ԵՄ օրենսդրության հետ	2016թ. մայիսի 15	Դանիայի վիճակագրություն

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2016թ. հունվարի19-22**

Բաղադրիչ 3. Աշխատաշուկայի վիճակագրություն

Գործողություն 3.1. Աշխատավարձի և աշխատանքի գնի վիճակագրության ընթացիկ իրավիճակի գնահատում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, հաշվարկված և հրապարակված աշխատավարձերի կառուցվածքային վիճակագրություն (2017թ.-ի հուլիս)

Չափանիշներ.

- Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին և աշխատանքի գնի ինդեսք (2017թ.-ի հուլիս)
- հաշվարկված և հրապարակված աշխատավարձերի կառուցվածքային վիճակագրություն (2017թ.-ի հուլիս)
- ՀՀ ԱՎԾ անձնակազմը վերապատրաստվել է աշխատանքի գնի, աշխատանքի գնի ինդեքսի, աշխատավարձերի կառուցվածքային վիճակագրության գծով (2017թ.-ի հուլիս)

1. Գործողության նպատակը

- Ընթացիկ իրավիճակի գնահատում
- Մեթոդների և տվյալների աղբյուրների գնահատում
- Եվրոպական և ԱՄԿ ստանդարտների ներկայացում
- Քննարկումներում ներգրավել համապատասխան շահագրգիռ կողմերին

2. Գործողության սպասվող արդյունքը

- Ընթացիկ իրավիճակի գնահատում
- Ընդհանուր պատկերացում մեթոդաբանության և տվյալների աղբյուրների մասին
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է (3.2-ը պլանավորված է 2016թ. մայիսի 23-27)

3. Մասնակիցները

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան
- Տկն Լուսինե Քալանթարյան

Այլ աշխատակիցներ՝
- Տկն Սուսան Հունանյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ,
- Տկն Անյա Սողոմոնյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ,
- Տկն Ջեմմա Ավոյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ,
- Տկն Անահիտ Սիմոնյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ,
- Տկն Կարինե Սարգսյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ,
- Տկն Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ,
- Տկն Լուսյա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ:

<u>ԱԵ փորձագետներ</u>
Պրն Սթին Բիլբֆելդթ Փեդերսեն, փորձագետ, Դանիայի վիճակագրություն
Տկն Մարիա Բոյե, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

<u>Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր</u>
Ներկայացուցիչներ
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից,
- ՀՀ ֆինանսների նախարարությունից,
- ՀՀ կենտրոնական բանկից,
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայից,
- Հայաստանի գործատուների հանրապետական միությունից,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից

նույնպես կներգրավվեն:

Հավելված 2.Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօր	Հյուրանոց /ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի գնահատում Եվրոպական և ԱՄԿ ստանդարտների ներկայացում
Չորեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Եվրոպական և ԱՄԿ ստանդարտների ներկայացում (*շարունակություն*) Մեթոդների և տվյալների աղբյուրների գնահատում
Չորեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Շահառուների հետ հանդիպման նախապատրաստում
Հինգշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Հանդիպում շահառուների հետ
Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների, ճանապարհային քարտեզի և առաքելության զեկույցի նախապատրաստում
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, առաջարկություններ և ՇԵ փորձագետների հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիր

Հավելված 3.Հանդիպումների մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

- Ստեփան Մնացականյան, ՀՀԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Լուսինե Քալանթարյան, ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ
- Սուսան Հունանյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Վարսիկ Սենեկերիմյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Ջեմմա Ավոյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Ռուզաննա Շաբոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Վարդան Արևշատյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Կարինե Սարգսյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Լուսյա, Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Նադյա Աստվածատուրովա, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին

<u>Արտաքին շահառուներ</u>

- Լևոն Պետրոսյան, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, ՀՀ աշխատանքի և աոցիալական հարցերի նախարարություն
- Գայանե Սաղաթելյան, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, ՀՀ աշխատանքի և աոցիալական հարցերի նախարարություն
- Հասմիկ Թադևոսյան, ՀՀ աշխատանքի և աոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալություն,
- Տիգրան Բաղդասարյան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
- Անահիտ Մատինյան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
- Մերի Մարկոսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն զբաղվածության բաժին
- Աիդա Մխիթարյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունաշխատանքի բաժին
- Կարինե Մադոյան, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
- Ալիկ Սարգսյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- Սամվել Մարգարյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության բաժին

<u>ԹՄԽ աշխատակազմ</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու
- Սոնա Միրզոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ